ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մայիսի 2025 թվականի N: 191-Ա ք.Գյումրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի N:602-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 34-րդ հոդվածի 1-2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի N:1066-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի գործունեության կարգի» 2-րդ կետի դրույթներով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2023 թվականի դեկտեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2022 թվականի հունիսի 26-ի N:334-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N:602-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2025 թվականի մայիսի 14 -ի N191 - Ա որոշման
«Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի
2023 թվականի դեկտեմբերի 22-ի N 602 - Ա որոշման

ԿԱԶՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՎԵԼԻ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Արտուշ Հովհաննիսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ,
Էմիլ Պետրոսյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և կոմունալ ենթակառուցվածքների վարչության, հողաշինության բաժնի պետ, հանձնաժողովի քարտուղար,
Ռոման Համայակյան	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ, հանձնաժողովի անդամ,
Աշոտ Սուքիասյան	Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարարության հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր մասնագետ, հանձնաժողովի անդամ,
Վաչագան Դավթյան	«Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ, հանձնաժողովի անդամ,
Աննա Մարգարյան	Ջրային կոմիտեի գույքի կառավարման և ներդրումների իրականացման վարչության պետ, հանձնաժողովի անդամ,
Սերգեյ Սարգսյան	Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Շիրակի մարզային ստորաբաժանման ղեկավար, հանձնաժողովի անդամ,
Համապատասխան համայնքի ղեկավար	Հանձնաժողովի անդամ
Համապատասխան համայնքի գյուղատնտեսության գծով մասնագետ	Հանձնաժողովի անդամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ՝ Դ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է